



27(384)  
20.09.2014

Ֆրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարող

# ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԻԹ

Lusarar

## ԱՆԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՊՍՏՈՒՅԻՆ ՀՂԿԱԾ ԱՆԲԵԿԱՆԵԼԻ ՈՒՂԵՐԻՉ

Աշխարհում հիմա մի տեղեկն է սկսվել՝ բոլոր ազգերն ու ազգությունները ծագում են անկախություն ձեռք բերել: Նույնիսկ բարեկեցիկ ապրող այնպիսի մի երկիր, որպիսին Շոտլանդիան է, դարձյալ անկախ պետականության ուղին է բռնել: Այսինքն՝ սոցիալական բարեկեցությունը բնավ գերակայող նպատակ չի հանդիսանում:

Բոլոր ժամանակներում ժողովուրդները պայքարել են իրենց ազատության համար՝ այդ ճանապարհին ոչ մի դժվարության առջ չերկնջելով, պատրաստ՝ ամեն մի գրկանքի, և այլ կերպ հնարավոր էլ չէ:

Երբ խորհրդային Միությունը փլուզվեց, Ֆրանսիան միութենական մյուս հանրապետությունների պես հռչակեց իր անկախությունը: Չեխոսլովակիայի առաջին տարիները ծանր էին ՖՅ-ի համար. աղետի գոտի, Արցախյան պատերազմ, տնտեսական շրջափակում... Այս բոլորը հայ ժողովուրդը կարողացավ հաղթահարել իր անկուտում կամքի շնորհիվ: Անվիճելի է, որ եթե հզոր խորհրդային Միությունն ուզեց՝ կարող էր երկու-երեք տարում վերականգնել երկրաշարժից քարուքանդված Գյումրին: Բայց դա չարեց, ու ԽՍՀՄ կազմալուծումից հետո աղետի գոտին իր բազում խնդիրներով ժառանգություն հասավ Ֆրանսիային: Այնուհետև սկսվեց Արցախյան պատերազմը, և երկրաշարժից տակավին վերքերը չբուժած Ֆրանսիայի Ֆանտաստիկությունը ստիպված եղավ պարտադրված պատերազմի մեջ մտնել Ադրբեյջանի հետ: Անշուշտ, արցախյան հիմնախնդիրը կարող էր ժամանակին լուծում ստանալ խորհրդային Միությունում, երբ ԼՂԻՄ մարզային խորհուրդը օրինական ճանապարհով որոշում ընդունեց Ադրբեյջանական ԽՍՀ կազմից դուրս գալու և Ֆայակական ԽՍՀ կազմի մեջ մտնելու մասին: Պատասխանը, սակայն, եղավ հարյուր հազարավոր հայերի բռնի տեղահանումը Ադրբեյջանից ու Ղարաբաղից, ինչպես նաև հյուսիս ու դաժան շրջափակումը:

Նորանկախ Ֆրանսիայի օգնությամբ Արցախն ազատագրվեց ազերական լծից, որից հետո, շարունակելով մնալ անողորմ շրջափակման մեջ, սկսվեց երկրաշարժի ու պատերազմի վերքերից ապաքինման տևական գործընթացը:

Այսօր աշխարհի քարտեզին Ֆրանսիայի Ֆանտաստիկությունն իր ուրույն տեղն ունի: Ֆրանսիայում մյուս ազգերին ու ազգություններին ներկայանում է ոչ թե անհատի՝ իր առանձնահատուկ հատկանիշներով, որոնցով նա բնատուր օժտված է, այլ պետական կայացվածությամբ: Պատահական չէ, որ հայկական անձնագիրը վավերացված է աշխարհի համարյա բոլոր երկրներում:

Լեոնային Ղարաբաղի Ֆանտաստիկության անվտանգության գլխավոր երաշխավորը եղել ու մնում է Ֆրանսիայի Ֆանտաստիկությունը: Այն նաև փարոս ու հանգրվան է ի սփյուռն տարածված հայերի համար: Եվ սա ոչ թե գեղեցիկ բառապաշարով ձևակերպված պաթետիկ արտահայտություն է, այլ ռեալ իրականություն, որի մեջ մենք իհրավի՜ վատահ ու ապահով ենք զգում մեզ: Ասել է թե՛ Ֆրանսիայի անկախության տոնը բոլոր հայերի տոնն է:

Ընդամենը 23 տարի է անցել ՖՅ անկախության հռչակումից հետո, բայց այդ երկու տասնյակից ավելի տարիները հարյուրամյակների խորհուրդ ունեն, որովհետև դրանում խտացված է մեր ժողովրդի նորօրյա հերոսական պատմությունը: Այն մի անբեկանելի ուղեղ ունի ապագային՝ անկախությունը հայրության ամենաթանկ նվաճումն է, որը պիտի աչքի լույսի պես պահպանել: Եվ մենք այսօրվա ու վարվա սերունդը, այդ պատգամ-ուղեղին միշտ հավատարիմ կմնանք:

«ԼՍՏԱՐԱՐ»

## ՊԻՒ, ԸՆԿԵՐԹՈՂ ԻՄ ՂԱՐԱԲԱՂ



Սեպտեմբեր: Ուսումնական տարվա սկիզբ: Գիտելիքի օր: Արցախի Անկախության տարեդարձ: Աշունը տոնական է մուտք գործում Արցախ աշխարհ: Ամեն աշնան հետ կարծես երիտասարդանում են մեր դպրոցները, մանուկների հետ մեկտեղ հրճվում, լցվում խինդով ու բերկրանքով: Եվ ամեն աշնան հետ մեր երիտասարդ հանրապետությունը տոնում է իր ծնունդը՝ Անկախության տարեդարձը: Սեպտեմբերյան առաջին զան-

գը Ֆացու հիմնական դպրոցի աշակերտները և ուսուցիչները դիմավորեցին հիմնանորոգված շենքում: Ֆացու գյուղի մեծ բարերար, ակադեմիկոս Գրիգորի Գաբրիելյանցի շնորհիվ սեպտեմբերի 1-ը դպրոցի համար կրկնակի տոնի վերածվեց: Դպրոցական ջախը, որ Ֆացիում վառվում է վաղնջական ժամանակներից, առանձնակի փայլատակեց տոնական գույներով նորացված դասարաններում:

Ավանդաբար, ինչպես Արցախի բոլոր կրթօջախներում, Ֆացու հիմնական դպրոցում ևս նոր ուսումնական տարվա մուտքը շնորհավորելուց, ծնոթքերումնեղի և անկախիքների մասին ընդհանրացումից և ակադեմիկոս Գրիգորի Գաբրիելյանցին երախտագիտության խոսք ուղղելուց հետո դպրոցում անցկացվեցին արիության դասեր՝ աշակերտներին սեփական ազգի մերօրյա սխրանքներին ու պատմությանը ծանոթացնելու նպատակով:

Այսօրվա դպրոցը նաև ազգային մտածողության ու արժանապատվության բնօրրան է: Անցկացվեցին զուգահեռներ Արցախյան գոյապայքարի հերոսների և դիրքերում աչալուրջ կանգնած զինվորների սխրանքների միջև:

Աշակերտները մեկ անգամ ևս գիտակցեցին, որ հերթափոխը վաղը իրենք պիտի ընդունեն ու հպարտորեն կանգնեն հայրենիքի պաշտպանության դիրքերում, որ ազատությունն ու անկախությունը պիտի անձնվիրաբար պահել, պաշտպանել, փայտալայել:

Արցախցին միշտ էլ մեծ շուքով է դիմավորում Անկախության տոնը: Արցախի անկախությունը հայ ժողովրդի ու հատկապես արցախցիների հերոսական պայքարի արդյունքն է: Մենք օրինական հպարտություն ենք ապրում այն բանի համար, որ մի բուռ ժողովուրդ կարողացավ պատմական իր հայրենիքում կառուցել ազատ, անկախ ու ինքնիշխան պետություն:

Սեպտեմբերի 2-ին աշակերտները գյուղական հասարակության հետ մեկտեղ այցելեցին Արցախյան գոյապայքարը հավերժացնող հուշահամալիր:

Դպրոցի տնօրեն Ա.Գրիգորյանը համառոտ ներկայացրեց Լեոնային Ղարաբաղի Ֆանտաստիկության կազմավորման պատմությունը, միաբանված հայ ժողովրդի հերոսական պայքարի արդյունքը, մեր անկախության նվաճումները, մերօրյա զինվորների անձնագրի նվիրվածությունը:

Ֆայրենիքի պատմության հետ կապված ամեն մի հիշարժան տարեթիվ ունի իր պատգամը: Զգնահատել այդ պատգամը, նշանակում է պարտք մնալ անցյալի առջ: Մեր դպրոցականներից շատերն են կրում Արցախյան գոյապայքարում զոհված որևէ քաջի անուն: Եվ կրում են հպարտորեն՝ գիտակցելով, որ վաղը պարտավոր են նրանց սման լինել:

Աշակերտների մասնակցությամբ կազմակերպվեց տոնական միջոցառում: Երեխաները գեղարվեստական միջոցներով արտահայտեցին իրենց նվիրվածությունը Արցախ աշխարհին, փառաբանեցին հայ զինվորին, երկրի շեմացմանը նպաստողներին:

Անկախությունը մի մեծ խորհուրդ ունի: Այսօր մեր ազգի, մեր պետության երաշխավորը մարտերում թրծված հայոց բանակն է: Եվ հպարտորեն կարող ենք ասել, որ հայոց հաղթանակած բանակի հետ մեր լեզուն, մեր դպրոցը, մշակույթը, մեր երկիրը շարունակում են իրենց հաղթական երթը դեպի հավերժություն:

Սուսաննա ԳՐԻԳՐՅԱՆ  
Ֆացու հիմն. դպրոցի  
տնօրեն

### Խորհուրդ -պատգամ՝ երիտասարդ ուսուցիչներին

## ԵՐԹ ՄՏԵԼ ԵՍ ԴՊՐՈՋ...

Վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է, լավ ուսուցիչը սովորեցնում է այն գտնել:

Ա. Գիստերվեզ

Մանկավարժությունը թերևս այն բնագավառն է, ուր չկան հատուկ դեղատոմսեր՝ ճիշտ առաջնորդվելու համար: Դա այն ասպարեզն է, ուր մանկավարժ-առաջալը պիտի կարողանա ճիշտ կողմնորոշվել, չխարխալի ուղորաններում, շուտ չհիասթափվի դժվարություններից, ընդունակ լինի ճիշտ որոշումներ կայացնելու և ի վերջո, կարողանա ստեղծագործել: Սրանք կամային հատկանիշներ են, որ պիտի կազմեն մանկավարժ-դաստիարակի գործունեության բաղադրատոմսը: Միայն մեծ դեպքերում է ստեղծվում իսկական հոգևոր ընդհանրություն երեխայի և մանկավարժի մոտ: Մանկավարժը պիտի լավ գիտակցի, որ ինքը երկար ժամանակով է դառնում երեխայի բարեկամը, համախոհը և ընկերը ընդհանուր գործում: Այս բերկրանքը վայելելու համար մանկավարժից շատ ջանքեր են պահանջվում:

Մանկավարժական գործունեության բազմամյա փորձը հնարավորություն է ընձեռում ինձ երիտասարդ մանկավարժների համար մի քանի պատգամ-խորհուրդներ առաջարկել, որ ներկայացնում են ստորև:

- Կարողացի՜ր կյանքդ նվիրաբերել երեխաներին. դա է իսկական երջանկությունը: Միթի՜ր նրանք քո երեխաների պես, քանի որ հենց այդ առանձնահատուկ աշխարհում կգտնես քո իրական հեթիաքը, հոգևոր խաղաղությունը:
- Աշխատի՜ր գրավիչ դարձնել քո առարկան. արդյունքում կծնվի այն մեծ սերը, որ աննկատ տանում է դեպի քեզ ու քո առարկան:
- Դասարան՝ մտիր միշտ թարմ նորություններով ու պատե՛հ առիթով մատուցիր սաներին. դա նման է լավ նշանառուի խփած գնդակի, որ անպայման հասնում է նշանակետին: Այս դեպքում միշտ սպասված ու ցանկալի կլինես սովորողներին:
- Երբեք թույլ մի՛ տուր քեզ պարսավել քո գործընկերոջը (դա կլինի քո, թե այլ մասնագիտության ուսուցիչ): Դրանով կօտարես սաներիդ քեզանից, և կծնվի անվստահություն մարդու և մարդկային հանդեպ:
- Դասարան՝ մտիր գիտելիքներով զինված:

Երբ աշակերտին դուրս ես բերում դասագրքային խիստ մեղ շրջանակներից և տանում ես գիտելիքների խորհրդավոր ճանապարհով, ինքնին դառնում ես երանգավառ մի փարոս, որի շողերը ձգում-քաշում են բազում սրտեր: Այստեղից էլ՝ խոր ակնածանք քո և դասավանդածդ առարկայի հանդեպ:

• Երբեք ինչաչար մի՛ եղիր: Մի՛ մոռացիր, որ երեխան իր արարքներով երբեմն կարող է նույնիսկ վիրավորել քեզ: Աշխատի՜ր, չվկայակցելով այդ արարքը, նրան մղել այնպիսի գործողությունների, որ ինքը հասկանա ու գնահատի իր սխալ քայլը, և ավելին, դու նրա համար կդառնաս լավ մարդու իդեալ:

• «Դժվար» երեխաների հետ մի՛ լարիր հարաբերությունները. ընդհակառակը, նրա մեջ գտիր դրական ու արժեքավոր գծեր, բյուրեղացրո՛ւ դրանք, և հետևում կմնան վատն ու հոռի դրսևորումները:

• Չետաքրքիր դարձրու մանկավարժական առօրյա. խորհի՜ր ու կգտնես բազում միջոցներ, որոնք կհետաքրքրեն ու կգրավեն սաներիդ: Կթռչի ժամանակը փետուրի թեթևությամբ. դրանից կշահեք երկուսդ էլ՝ դու և սաներդ:

• Առօրյա հոգսերով ծանրաբեռնված մի՛ մտիր դասարան: Վատ տրամադրությունը լարում է ճնշում է երեխաներին, իսկ նման մթնոլորտում հույզն է կառավարում միտքը:

• Անընդհատ հարստացրո՛ւ բառապաշարդ, որպեսզի անսխալ մատուցես ասելիքդ. գեղեցիկ խոսքը (ոչ խրթին) տպավորում է ունևորին, կարծիք կազմում քո մասին: Դա միևնույն ժամանակ խոր իտրագանք կծնի մայրենի լեզվի ու նաև քո անձի հանդեպ:

• Երբեք խոսքդ ու գործդ մի՛ հակադրիր իրար: Եթե ուզում ես, որ սովորողները միշտ հավատ ընծայեն առ քեզ, ուրեմն կյանքում առաջնորդվի՛ր «ինչպես որ ես» սկզբունքով: Չենք սաներդ վրիպում նկատեն քո վարկեկերպություն, իսպառ կկորցնես վստահությունդ նրանց աչքում:

• Եղի՜ր հայրենապաշտ ու ազգասեր: Քո առօրյա գործերով վարակի՜ր նրանք: Մանկավարժի առաջին սուրբ գործը հայրենասեր ու ազգասեր սերունդ դաստիարակելն է՝ անկախ նրանից, թե ինչ առարկայի մասնագետ ես:

• Սովորողներին շերտավորելիս շատ զգույշ ու նրբանկատ վարվի՛ր, որ նրանք չհայտնվեն

ծայրահեղ բևեռներում: Մի՛ բևեռացրու ո՛չ լավին, ո՛չ վատին: Նրանք իրենց մեջ կրում են երկուսն էլ:

• Դասարան մտնելիս ունեցի՜ր անպայման քո վահանն ու սուրը. վահանով պաշտպանվի՛ր սովորողների հարցադրումներից և սրով կտրի՛ր չինացության պատմե՛շը: Անզեն մանկավարժը միշտ «պաշարման» մեջ է:

• Ժամերի հետ փոխի՛ր քո տարիքը: Եղի՜ր լեզու գտնող: Կրտսերների մոտ ես մտնում՝ դարձի՛ր կրտսեր, ավագներից ես այցելում՝ վարվի՛ր հավասարը հավասարի հետ սկզբունքով: Բայց երբեք մի՛ իջիր քո բարձունքից:

• Տեղեկացի՜ր աշխարհի անցուդարձին, որ երեխաների մոտ հիմար կացության մեջ չհայտնվես: Վարի՛ր հետաքրքիր ու աշխույժ դասեր: Անզոր ու անկարող ուսուցիչը նման է զինաթափ զինվորի, որ փորձում է մարտ վարել:

• Քայլերիդ մեջ եղի՜ր զուսպ ու հավասարակշռված. քեզ հարյուրավոր այքեր են հետևում: Մի փոքրիկ վրիպումը կարող է ճակատագրական լինել հեղինակությունդ համար:

• Չի՛շի՛ր. դասը, դպրոցը, գիտելիքը «ախպետություն» չեն հանդուրժում: Սովորողների տարիքի ու գիտակցության աճման արդյունքում դու կհայտնվես Ֆակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի հերոսների ողբալի կացության մեջ:

Մանկավարժությունը վերանորոգում ու կարկատաններ չի հանդուրժում. այն միշտ պահանջում է նորն ու թարմը: Գնահատե՛ք նորն ու առաջավորը:

Զգիտե՛մ՝ որքանով կարողացա ներկայացնել լավ մանկավարժին հատուկ գծերը, այնուամենայնիվ, մեծ ու դրական է իմ հավատը այն երիտասարդ մանկավարժների նկատմամբ, ովքեր շահագրգռված են մեր ազգի պայծառ ու լուսավոր ապագայով, ում խորք չեն մեր ազգային գաղափարախոսությունը, կեցությունն ու գիտակցությունը:

Ֆաստատ ու վստահ քայլելու առաջին նախապայմանը հարուստ գիտելիքներ ունենալն է: Վստահ ու անվարան քայլեցե՛ք այդ դժվարին, բայց պատվաբեր սանդուղքով:

Սուրբյա ԴԱԶԱՐՅԱՆ  
գ.ԽՆԱԿԱՊ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՈՒՍԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆՈՒՄ



Հանրակրթությունը յուրաքանչյուր պետության կարևորագույն հենասյուններից մեկն է: Եվ պատահական չէ, որ այն մշտապես գտնվում է մեր երկրի ղեկավարության և շրջանի վարչակազմի ուշադրության կենտրոնում:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության, շրջվարչակազմի և կրթության բաժնի համատեղ ջանքերի շնորհիվ հետևողական աշխատանքներ են տարվում դպրոցներում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, համապատասխան մասնագետներով ապահովման և ուսման որակի բարձրացման ուղղությամբ:

2013-2014 ուստարում Քաշաթաղի շրջանում գործել է 51 հանրակրթական դպրոց, որից 42-ը միջնակարգ՝ 2 մասնաճյուղերով և 9-ը՝ հիմնական: Ձևավորվել է 339 դասարան կոմպլեկտ՝ 1759 աշակերտների ընդգրկմամբ: Նախորդ ուսումնական տարվա համեմատ աշակերտների քանակը ավելացել է շուրջ 80-ով:

2013-2014 ուստարվա սկզբին շրջանի հանրակրթական դպրոցներն ունեցել են 1103 աշխատող, որից 755-ը՝ ուսուցիչ:

Տարվա սկզբից շրջանում գործել են նախադպրոցական 2 հաստատություն՝ Բերձորի պետական և Քարեգահի բարեգործական մանկապարտեզները:

Հուլիսի 1-ին բոլոր դպրոցներում տարեցտարի ավելանում է նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը:

2014թ. ապրիլին շահագործման է հանձնվել Մոշաթաղի մանկապարտեզը, իսկ շուտով իր աշխատանքները կսկսի նաև Կովասկան բաղաձի մանկապարտեզը:

Սեպտեմբերի 1-ին բոլոր դպրոցներում անցկացվել են միջոցառումներ՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվան նվիրված, ինչպես նաև արհուրյան դասեր՝ ԼՂՀ անկախության հռչակման 23-րդ տարեդարձի առթիվ: Ուստարվա ընթացքում ԿԳ նախարարությունից ստացվել և դպրոցներին են բաշխվել դասագրքեր, մեթոդական, մանկավարժական ձեռնարկներ, դիդակտիկ պարագաներ:

ԼՂՀ անկախության օրվա առթիվ Քաշաթաղի շրջանի կրթության ոլորտում նշանակալի ավանդի համար Դիցմայրիի հիմնական դպրոցի նախկին տնօրեն Արամ Մխիթարյանը պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով: Ցավոք, նա վաղաժամ հեռացել է կյանքից:

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ունեցած նշանակալի ավանդի համար մի շարք մանկավարժներ պարգևատրվել են ԼՂՀ վարչապետի հուշամեդալով, ինչպես նաև շրջվարչակազմի ղեկավարի պատվոգրերով:

Տարվա ընթացքում շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտները ակտիվորեն մասնակցել են ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպված ռազմամարզական, արտադպրոցական միջոցառումներին, մրցույթներին և առարկայական օլիմպիադաներին:

2013-2014 ուստարվա ՀՀ և ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի համարապետական փուլին մասնակցել է շրջանի 29 աշակերտ:

Օլիմպիադայի հանրապետական փուլին ակտիվ մասնակցության համար ԼՂՀ ԿԳ նախարարի պատվոգրի են արժանացել 4 աշակերտներ 5 առարկաներից: Ի տարբերություն նախորդ 2 տարիների՝ այս ուսումնականում մրցանակային տեղեր չենք ունեցել:

Օլիմպիադայի արդյունքները ամփոփվել են շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների խորհրդակցությունում: Ակտիվ մասնակցություն ունեցած աշակերտները խրախուսվել են, կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

2013-2014 ուստարվա ընթացքում ԼՂՀ ԳԹԿ-ի կողմից անցկացվել են արտաքին ստուգումներ մի շարք առարկաներից, որոնց արդյունքները և քննարկվել են դպրոցների տնօրենների խորհրդակցություններում:

Շրջանի աշակերտները ակտիվորեն մասնակցել են ունեցել նաև «Կենդուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթին և 160 մասնակցներից 8-ը արժանացել են հատուկ մրցանակի:

Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված՝ ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպված միջոցառմանը Բերձորի պետական մանկապարտեզի կուլեկտիվը «Հմուտ ձեռքեր» անվանակարգում հաղթող է ճանաչվել և արժանացել պատվոգրի:

Հուլիսի 29-31-ը Ստեփանակերտում ազատամարտիկ Ստալինա Ասրյանի հիշատակին նվիրված շախմատի 4-րդ հուշամրցաշարին մասնակցած Գանձայի միջնակարգ դպրոցի աշակերտներ Կարեն և Դավիթ՝ Բեկ Հովհաննիսյանները գրավել են համապատասխանաբար 1-ին և 2-րդ տեղեր:

Հուլիս ամսին շրջանի 18 աշակերտներ Միջնավանի զինղեկի ղեկավարությամբ մասնակցել են «Ասպետ» ռազմամարզական ճամբարին, արժանացել մի շարք պատվոգրերի և հուշանվերների:

Ուստարվա ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել աշակերտների ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը: Բոլոր դպրոցներին տրամադրվել են օդանոցի հրացաններ, իսկ շրջանի դպրոցներից 2-ը համալրված են ուսումնական զենքով՝ ավտոմատով:

Անհրաժեշտ է դպրոցները հնարավորինս ապահովել ռազմաուսումնական բազայով և համապատասխան պայմաններ ստեղծել ՆԶՊ առարկայի դասավանդումը ավելի արդյունավետ դարձնելու համար:

Դպրոցներում աշակերտների նախնական զինվորական պատրաստության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացվում են հետևողական աշխատանքներ:

Հարավային թևի դպրոցների աշակերտների կրակային պարապմունքները անցկացվում են մոտակա զորամասերի օգնությամբ:

Իսկ հյուսիսային թևի դպրոցները բացը լրացնում են Բերձորի հ. 1 միջնակարգ դպրոցում տեղադրված վարժասարքի միջոցով:

Ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակը էլ ավելի բարձրացնելու նպատակով կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, բաց դասեր, դասախոսություններ՝ նվիրված Արցախի և ՀՀ ազգային հերոսներին, ինչպես նաև հանդիպումներ ազատամարտիկների հետ և այցելություններ զորամասեր:

ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանի ծննդյան 50-ամյակին նվիրված հանրապետական միջոցառմանը ակտիվորեն մասնակցել են Տիգրանավանի և Այգեհովիտի միջնակարգ դպրոցների աշակերտները:

Մշեմի դպրոցի տնօրեն Ա. Ներսիսյանը, Ծոբածորի դպրոցի տնօրեն Հ. Մկրտչյանը, Վանի միջնակարգ դպրոցի տնօրեն Վ. Վարդանյանը կատարել են պահանջվող քանակից պակաս դասալսում՝ անգամ չապահովելով 50 տոկոս քանակը, իսկ Վանի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Վ. Գրիգորյանի աշխատանքը երկրորդ տարին անընդմեջ «անբավարար» է գնահատված: Հայկազյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Գ. Մարտիրոսյանը նախորդ տարիներին ներկայացրել է ուշացումով, իսկ այս տարի չի ներկայացրել իր կողմից կատարված դասալսումների մատյանը: Նշված աշխատողների նկատմամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

Մյս գործում անմասն չմնացին նաև շրջանի դպրոցների մի շարք ուսուցիչներ, տնօրեններ և հատկապես՝ զինղեկներ: Օգտվելով առիթից ցանկանում են շնորհակալություն հայտնել շրջանի վարչակազմի նախաձեռնությանն արձագանքած դպրոցների բոլոր զինղեկներին, աշխատողներին, որոնք կանգնեցին սահմանում գտնվող մեր զինվորի կողքին՝ գիտակցելով, որ հայրենիքի պաշտպանությունը բոլորիս սրբազան պարտքն է՝ անկախ հանգամանքից:

2013-2014 ուստարվա ընթացքում ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել Վուրգավանի, Սարատակի, Ծաղկաբերդի, Հակարիի, Կովասկանի, Ալաշկերտի, Բերձորի հ.1 միջնակարգ դպրոցներում:

Հատկապես անբավարար են եղել Հակարիի միջնակարգ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները: Դպրոցի տնօրեն Ա. Մովսեսյանը իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից: Ցածր է ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը նաև Ալաշկերտի միջնակարգ դպրոցում:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը բավարար, որոշ դեպքերում լավ է գնահատվել Բերձորի հ.1, Սարատակի և Ծաղկաբերդի միջնակարգ դպրոցներում:

Ստուգումների մասին տեղեկանքները մանրամասն ուսումնասիրվել են կրթության բաժնի մասնագետների կողմից, տեղերում իրավիճակը են մանկավարժական խորհրդի հիստեր և դպրոցների տնօրեններին համեմարարվել է հետևողական աշխատանքներ տանել վեր հանված թերություններն ու բացթողումները վերացնելու համար: Կատարված աշխատանքները վերահսկվել են կրթության բաժնի կողմից:

Դպրոցների մանկավարժներին և վարչական աշխատողներին մեթոդական օգնության և ստուգումների նպատակով կրթության բաժնի տեսուչների կողմից այցելություններ են կատարվել 25-ից ավելի դպրոցներ: Կազմակերպվել են սեմինարներ՝ շրջանի հանրակրթական դպրոցների ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով:

2014 թ. մայիսի 12-28-ը ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ստուգվել են կրթության բաժնի կենտրոնացված հաշվապահության և դպրոցների աշխատանքները: Հայտնաբերված թերությունները հիմնականում վերաբերել են հաճախումների ցուցակներում դպրոցների տնօրենների կողմից թույլ տրված խախտումներին: Չմասնավոր բազմաթիվ զգուշացումներին, որոշ տնօրեններ շարունակում են անպատասխանատու վերաբերմունք դրսևորել:

2014թ. հունիսին ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության պետ Ս. Արզումանյանի կողմից ստուգվել են դպրոցների տնօրենների և փոխտնօրենների կողմից կատարված դասալսումների մատյանները:

Մշեմի դպրոցի տնօրեն Ա. Ներսիսյանը, Ծոբածորի դպրոցի տնօրեն Հ. Մկրտչյանը, Վանի միջնակարգ դպրոցի տնօրեն Վ. Վարդանյանը կատարել են պահանջվող քանակից պակաս դասալսում՝ անգամ չապահովելով 50 տոկոս քանակը, իսկ Վանի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Վ. Գրիգորյանի աշխատանքը երկրորդ տարին անընդմեջ «անբավարար» է գնահատված: Հայկազյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Գ. Մարտիրոսյանը նախորդ տարիներին ներկայացրել է ուշացումով, իսկ այս տարի չի ներկայացրել իր կողմից կատարված դասալսումների մատյանը: Նշված աշխատողների նկատմամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

91 աշակերտներ 2013-2014 ուստարում ավարտել են դպրոցը: 60-ից ավելի աշակերտներ իրենց ուսումը շարունակում են ՀՀ և ԼՂՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ուստարվա ընթացքում Քաշաթաղի շրջանի վարչակազմի օգնությամբ կրթության բաժնից աշխատանքներ է տարել շրջանի հանրակրթական դպրոցները մանկավարժական կադրերով ապահովելու ուղղությամբ, սակայն դպրոցների զգալի մասը դեռևս կարիք ունի համապատասխան մասնագետների, որի հիմնական պատճառը շարունակում է մնալ բնակարանային խնդիրը: Այս հանգամանքն իր ազդեցությունն է ունենում հեռավոր գյուղերում գործող հանրակրթական դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ մակարդակով կազմակերպման վրա: Խնդրի լուծումը թերևս կլինի դպրոցներին կից ուսուցչի տների կառուցումը:

2014թ հունվարին շահագործման հանձնվեց Արտաշավի միջակարգ դպրոցը:

Կրթության բաժնի բյուջեով նախատեսված միջոցներով հիմնանորոգվել է Մովսեսաշենի հիմնական դպրոցի շենքը: Շուտով շահագործման կհանձնվի Կունայրիի միջնակարգ դպրոցի հիմնանորոգված շենքը:

Բայց, ցավոք, շարունակվում են ոչ բավարար շենքային պայմաններում գտնվել բազմաթիվ դպրոցներ: Հայկազյանում, որտեղ սովորում է 100-ից ավելի աշակերտ, նորակառույց դպրոցական շինություն է կառուցվում:

Հիմնանորոգման ենթակա են Դրախտածորի, Բերձորի հ. 1, Տանձուտի, Վուրգավանի, Տիգրանավանի, Վանի, Ղազարապատի դպրոցների շենքերը: Արդեն 4-րդ տարին է՝ շինարարական աշխատանքներ են ընթանում Միջնավանի միջնակարգ դպրոցում, որը խոչընդոտում է ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Ամառային արձակուրդների ընթացքում 100-ից ավելի աշակերտներ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության, ՀՕՄ-ի և շրջվարչակազմի աջակցությամբ իրենց հանգիստն են անցկացրել տարբեր ճամբարներում:

Շնորհակալություն են հայտնում մեր շրջանի բոլոր այն մանկավարժներին, որոնք, հաճախ անտեսելով կենցաղային ոչ այնքան բարվոք պայմանները, ջանք ու եռանդ չեն խնայում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում: Ձեր բարեխիղճ և սրտացավ աշխատանքից է կախված մեր երկրի վաղվա օրը:

**Վարդուշ ՄՈՎՍԵՍՅԱՆ**  
**Քաշաթաղի շրջվարչակազմի**  
**կրթության բաժնի վարիչ**



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ՌԻՍՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՆՈՐ` 2014-2015 ՌԻՍԱՐԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ



Պատմություն դարձավ և մեկ ուսումնական տարի, որն անպայման իր դերն ու նշանակությունը կունենա մեր այսօրվա և վաղվա կյանքում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթությունը, գերակա ուղիորտ լինելով՝ ապահովում է կրթական բոլոր աստիճանների՝ նախադպրոցականից մինչև հետբուհական մասնագիտական կրթության մերձաշնակ գործունեությունը, որի հիմնական խնդիրն է ուսման որակի և արդյունավետության բարձրացումը: Այս շրջանում իր ծավալային և բովանդակային առումով առանձնահատուկ իր տեղն ունի հանրակրթությունը, որի գլխավոր նպատակն է ապահովել սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Այդ գլխավոր նպատակի իրականացման ուղղությամբ Մարտունու շրջանում ի՞նչ քայլեր են ձեռնարկվել 2013-2014 ուստարում, ի՞նչ անելիքներ կան, ի՞նչ են մեզ սպասվում նոր ուսումնականում:

Այսինքն նախադպրոցական կրթությունից: 2013-2014 ուստարում շրջանում գործել են պետական հովանավորությամբ 8 և ոչ պետական մեկ մանկապարտեզներ՝ 27 խմբերով, 659 երեխայի ընդգրկմամբ, Ալիբալիի, Գիշու, Թաղավարդի, Խնուշիկի, Քերթի դպրոցների կից նախապատրաստական խմբերը՝ 64 երեխաներով: Նախադպրոցական հիմնարկների ուսումնամեթոդական հենքի հարստացման ուղղությամբ լուրջ աշխատանքներ է տանում ԼՂՀ ԿԳ նախարարությունը:

Մարտունու հ. 2 և Ղ. Ճարտարի մանկապարտեզները ձեռք են բերել կոշտ և փափուկ գույք:

Չնայած նրան, որ մանկապարտեզներում ուսումնադաստիարակական աշխատանքները գնահատվում են բավարար, հարկ է նշել, որ այս ուստարում շրջանի մանկապարտեզների դաստիարակներից ոչ մեկը «Տարվա ավագույն դաստիարակ» մրցույթին հայտ չի ներկայացրել, որից միակ հետևությունն այն է, որ դաստիարակները վստահ չեն իրենց հնարավորություններում, իսկ դա ենթադրում է, որ դաստիարակները քիչ են զբաղվում ինքնակրթությամբ, աշխատում են աշխատելու համար և չեն ձգտում բարձր ցուցանիշներ ապահովել:

Հաշվետու ժամանակաշրջանում ուստարում կրթության պետական տեսչության կողմից համալիր ստուգման են ենթարկվել Մարտունու հ. 1, հ.2 և Սոսի մանկապարտեզները: Վեր հանված թերությունների մի մասը վերացվել է անմիջապես, իսկ մնացածի վերաբերյալ կազմվել է թերությունների վերացման պլան-ժամանակացույց, որով առաջնորդվում են մանկապարտեզների տնօրենները:

Դաս-պարապմունքների կատարելագործման նպատակով անց է կացվել 75 պարապմունք Մարտունու հ.1, հ.2, Ղ. Ճարտարի, Կ.Շուկայի մանկապարտեզներում:

Բարվոք վիճակում է ծնողական մոտիվներին գործընթացը: Կրթության բաժինը մանկապարտեզների համար կազմում է ամենամսյա գնացուցակ, որով և առաջնորդվում են շրջանի բոլոր մանկապարտեզները, իսկ օգոստոսի 1-ից բոլոր մանկապարտեզներին ներկայացվել է մեկամսյա ճաշացուցակ, և այն շարունակվելու է ամբողջ տարվա ընթացքում: Անհրաժեշտ են համարում նշել, որ այս գործընթացում առաջին միակ խնդիրը մանկապարտեզների թաղամասերը հասցնելն է, որը դեռևս չի հաջողվում: Կինոդեղինք լիազոր մարմինների աջակցությունն այս հարցում:

Բոլոր մանկապարտեզներում ճիշտ և ժամանակին կազմակերպվում է «Հրաժեշտ մանկապարտեզին» միջոցառումը: Նոր ուսումնական տարում հանրակրթական դպրոցների առաջին դասարան են հանձնվում մանկապարտեզների թողարկած 194 երեխաներ:

Այսօր հիմնադրոգման ենթակա են Մարտունու հ.1 և հ.2 մանկապարտեզները, մասնակի նորոգում է պահանջում Կ.Շուկայի մանկապարտեզը, իսկ նոր շենքի կարիք ունի Ճար-

տարի մանկապարտեզը: Ի դեպ նշեն, որ այստեղ դրված է մանկապարտեզի նոր շենքի հիմքը: Դրանց կողքին ուզում են նշել Սոսի նոր մանկապարտեզի շենքը, որը հիմնականում ավարտված է և շուտով կհանձնվի շահագործման: Վստահ եմ՝ մնացած բոլոր մանկապարտեզների շենքային պայմանների բարելավման հարցերը նույնպես կլուծվեն, որովհետև պետության կողմից այդ ուղղությամբ կատարվող հետևողական աշխատանքները հենց այդ մասին են խոսում:

Հանրակրթության իրականացման հիմնական օղակը եղել է մնում է դպրոցը:

2013-2014 ուստարում շրջանում գործել են 36 հանրակրթական դպրոցներ՝ 7 մասնաճյուղերով, որից 23 միջնակարգ (2 հոսքային), 13 հիմնական դպրոցներ՝ 363 դասարան-համակարգով և 3569 սովորողներով: Դասարան-կոմպլեկտների միջին խտությունը կազմել է 9,8-10 աշակերտ: Դպրոցներում ունենք շուրջ 1308 աշակերտներ: Ուստարում դպրոցներում աշխատել են 897 ուսուցիչներ՝ 0,6 դրույթ (13/դ) միջին ծանրաբեռնվածությամբ: Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը 4:1 է: Անցած ուսումնական տարին 12-ամյա կրթության ճանապարհին 3-րդն էր, որը թողարկեց 223 աշակերտ:

Սովորողների թիվը ուստարվա սկզբում 3569, վերջում 3563 էր: Շրջանից դուրս տեղափոխվածների քանակը՝ 31, ընդունվածների քանակը՝ 36: Փոխադրվել են հաջորդ դասարաններ 3497 աշակերտներ, որոնցից 372 շրջանավարտներ ավարտել են 9-րդ դասարանը՝ ստանալով վկայական, նրանցից 35-ը՝ վերաբնութային արդյունքներով, իսկ 223 աշակերտներ ավարտել են 12-րդ դասարանը՝ ստանալով ատեստատ:

Կուզենայի կանգ առնել 2013-2014 ուսումնական տարում կրթական բարեփոխումների ճանապարհին ձեռնարկված քայլերի և պարզել, թե ինչ հաջողություններ են ունեցել ու վերհանել այն հիմնական թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են դպրոցական բարեփոխումների իրականացմանը:

Նախ՝ դպրոցների ուսումնամեթոդական հենքի մասին: Անցած ուստարում շարունակվել են դրանց հարստացման ուղղությամբ ԼՂՀ կառավարության, ԿԳ նախարարության ջանքերը: Հիմնադրոգմվել է Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցը, կառուցվում են Նորշենի, Կարմիր Շուկայի և Ծովատեղի միջնակարգ դպրոցների շենքերը: Բոլոր դպրոցները ապահովված են աշակերտական ցուցանիշներով և մասնակիորեն՝ պահարաններով, ուսուցչական սեղաններով և այլն:

Դպրոցների ուսումնամեթոդական բազայի հարստացման ուղղությամբ շարունակվել են համակարգչային կաբինետների ստեղծման աշխատանքները, ունեցել են համակարգչային դասարան Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցում: Նոր համակարգիչ է ստացել Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցը:

Այս տարվանից շրջանի դպրոցների 80%-ը օգտվելու է համացանցից:

Նոր ուսումնականում կշարունակվեն դպրոցների ապահովումը համակարգիչներով, լաբորատոր սարքավորումներով:

Դպրոցներում գործել են 36 համակարգչային, 105 առարկայական կաբինետներ և 122 մեթոդավարումներ, որոնք պետք է հիմք հանդիսանան ուսումնական գործընթացը բարելավելու համար:

Հանրակրթական ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված է սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որը պետք է ընթանա ոլորտի բարեփոխումների աստիճանական իրականացմամբ: Այս առումով կարևորվում է հանրապետությունում անցումը 12-ամյա կրթության, որի ապահովման ուղղությամբ իրականացվում է առարկայական նոր չափորոշիչներին համապատասխան ծրագրերի ու դասագրքերի ներդրումը, որոնք, սակայն, միշտ չէ, որ լիարժեք են լինում և ընդունվում մասնագետների կողմից: Այս գործընթացում առավել կարևոր հիմնախնդիր է ուսման որակի և արդյունավետության բարձրացումը, որն ավելի բարդ է տևական աշխատանք է, ինչին նպատակաուղղված է կրթության կառավարման մարմինների և համակարգի մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը: Ավագ և հոսքային դպրոցների ստեղծումը դրանց առաջին նախապայմաններն են: Սակայն այսօր միանշանակ չի կարելի արժեքնադրել, որ 12-ամյա կրթությունը, ավագ և հոսքային դպրոցների ստեղծումը որոշակիացրին այն հարցի պատասխանը, թե որքանով է արդյունավետ աշխատանք կատարվում հոսքային ուսուցման ուղղությամբ: Ուզում են փորքիկ անդրադարձ կատարել վերը հնչեցրած միտքը պարզաբանելու համար:

Ինչպես միշտ, այնպես էլ այս ուսումնական տարում բոլոր դպրոցների համալիր ստուգման արդյունքներով պատկերը հետևյալն է: Մինչ ստուգումը առաջադիմությունը 80-100%, որակը 35-70% է, իսկ ստուգման արդյունքում առաջադիմությունը 40-50%, որակը 0-35% է: Սա խոսում է արհեստական գնահատման մասին, այն մասին, որ ուսուցիչները, մասն ձևով գնահատելով, զբաղվում են ինքնախաբեությամբ, և քանի որ պետական տեսչությունը 5-6 տարին մեկ է կարողանում համալիր ստուգումներ իրականացնել դպրոցներում, դա նույնպես պարտադիր է ստեղծում անբարեխիղճ ուսուցիչների համար: Կարծում են, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի պետությունից հատկացված յուրաքանչյուր դրամ արդյունք տա, այլ ոչ թե փոխադրվի: Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտ են համարում, որ կրթության բաժինն ունենա ստեղծելու խումբ, որը, իմ խորին համոզմամբ, լուրջ խթան կհանդիսանա թե՛ կրթության որակի և առաջադիմության, և թե՛ պետական միջոցների նպատակային օգտագործման ուղղությամբ: Մի խոսքով, անելիքները շատ շատ են, և մենք՝ կրթության համակարգի ներկայացուցիչներս, պետք է գիտակցենք դա անենայն լրջությամբ: Եթե մեր հարևանները, ելնելով իրենց բնական հարստություններից (որոնք իմիջիայլոց անսպասելի են), մեր երկրի հետ փորձում են խոսել այլ լեզվով, մենք դրան պարտավոր ենք հակադրվել մեր գեներտիկ հզոր անսպասելի ինտելեկտով, իսկ այդ գեներտիկ ինտելեկտը պետք է մշակվի և ուղղություն ստանա կրթարաններում, որը, սակայն, այսօր դեռևս չի բավարարում մեր ազգի հավակնությունները:

Շրջաբարձակազմի ղեկավարի հետ բազմաթիվ քննարկումներից հետո մշակվել է դասաբաշխման նոր ձև, որը քննարկվել է տնօրենների հետ ու կատարվել որոշակի ճշտումներ: Այն կկիրառվի նոր ուսումնականից և գնալով ավելի կարգաճան: Նոր դասաբաշխման ձևի մեջ մենք մեծ տեղ ենք տալիս տեսչական ստուգումների արդյունքին, օլիմպիադաների, ԳՊԿ-ի և տնօրինության պետությանը կողմից գրավորներին: Սակայն այստեղ կրկին առաջ է գալիս բաժիններում տեսչություն ունենալու հարցը, որովհետև պետությանը կողմից դպրոցները ստուգում է 5-6 տարին մեկ անգամ, իսկ բաժնի տեսչությունը այն կստուգի տարին մեկ անգամ, եթե ոչ ավել: Ուզում են հատկապես նշել, որ տեսչություն ունենալը չպիտի կապվի ֆինանսների սակավության հետ, որովհետև այն կարող է և կվերադարձնի պետությանը ավելի, քան կստանա նրանից: Ուսուցիչների մի մասը բավականաչափ հեղինակություն չունի ոչ դպրոցում, ոչ էլ հասարակության մեջ: Այն ուսուցիչները, ովքեր կարողանում են ապահովել բարձր որակ և առաջադիմություն, նրանց նկատմամբ դասաբաշխման ժամանակ պետք է լինի յուրահատուկ վերաբերմունք: Նման վերաբերմունքն արդեն կանոնակարգվել է, և այն կիրականացվի բոլոր դպրոցներում:

Իրավասու մարմինների կողմից շատ աշխատանք է տարվել ավագ դպրոցներում ուսումնադաստիարակական գործընթացի կազմակերպման և կատարելագործման ուղղությամբ, սակայն մինչև ուսուցիչը ամենայն լրջությամբ չգիտակցի, որ դպրոցում աշխատում են ոչ միայն գույնի վատակներ, այլ և սերունդ կրթելու ու դաստիարակելու համար, և որ այսօրվա ծայրահեղ բարդ աշխարհաբաղաբանական իրավիճակում մեր ազգին անհրաժեշտ է բացարձակապես կրթված ու դաստիարակված սերունդ, ապա մենք չենք կարող հավանել երաշխավորված ապագա ունենալուն:

Ըստ վերլուծությունների՝ աստիճանաբար կանոնակարգվում է ավագ դպրոցներում հոսքային դասարաններ ընդունվելու կարգը, որը կատարվում է սովորողների ընտրությամբ, սակայն այստեղ ևս խնդիր ունենք. չի կանոնակարգվում 12-րդ դասարանից 2-րդ կիսամյակում դպրոց հաճախելու կարգը, որի պատճառով աշակերտները կարող են հայտնվել փողոցում, ինչն անթույլատրելի է: Անհրաժեշտ են համարում ավագ դպրոց ընդունել այն աշակերտներին, ովքեր կհաղթահարեն նախատեսված հարցաշարը, որպես ընդունելության քննություն:

Անկանակաճ հանրակրթական բարեփոխումների իրականացման գլխավոր դեմքը ուսուցիչն է, որի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է մասնագիտական վարպետության բարձրացումը միտված քայլերից, իշխանությունների և հասարակության ակտիվ աջակցությունից: Դպրոցները լավագույն մասնագետներով ապահովելու լուրջ խթան համոզմանով ուսուցիչ քափուր տեղի համար մրցույթի կազմակերպման կիրառումը: Այդ կապակցությամբ բաժնի կողմից վերահսկվում են մանկավարժական կարգերի ընտրու-

թյան և նշանակման գործում շրջանի մի շարք հանրակրթական դպրոցներում կայացած քափուր աշխատանքների համար մրցույթները: Անցյալ տարի օգոստոսյան խորհրդակցության ժամանակ նշել են, որ քափուր տեղի համար մրցույթի նոր կարգը կսկսվի կիրառվել խորհրդակցությունից հետո, և վերլուծելուց հետո կտանք գնահատական: Այն կիրառվեց, և տվեցինք բացասական գնահատական, հատկապես որ չէին ընդգրկում մասնագիտական հարցեր: Կրթության և գիտության նախարարությունը դա հաշվի առավ, և մշակվեց նոր կարգ, որտեղ բացի մի շարք փոփոխություններից, բանավոր փուլ մտցվեց 50 մասնագիտական հարց, որը ըստ իս անբավարար է: Կարծում են, որ եթե քափուր տեղի համար մրցույթի հարցաշարում պիտի լինեն ոչ մասնագիտական հարցեր, ապա դրանք չպիտի գերազանցեն ընդհանուր հարցերի 10 տոկոսը: Այսօր դպրոց և ուսուցիչը հասարակության մեջ նախկին հեղինակությունը չունեն, որովհետև կրթական քաղաքականության մեջ արտավորվեց բարեփոխումների ժամանակ չի հաշվարկվել այդ համագամանքը, և կանգնել ենք փաստի առաջ: Առաջարկում են երբեմնի հարգաբեմն ու հեղինակությունը վերականգնելու համար կատարել մի շարք քայլեր: Առաջին՝ 9-ից 10-րդ դասարան փոխադրվողների համար կազմակերպել ընդունելության քննություններ հայոց լեզու, հայոց պատմություն և մաթեմատիկա առարկաներից, 2-րդ՝ աշակերտների գիտելիքների ստուգման թեստային տարբերակ դադարեցնել և աշակերտներից պահանջել, որ նրանք իրենց ստացած գիտելիքները գրավոր համոզմունք կամ բանավոր արտահայտվեն, երրորդ՝ ուսուցիչ քափուր տեղի համար մրցույթի հարցերի 90 տոկոսը առնվազն լինի մասնագիտական, չորրորդ՝ ուսուցիչների ատեստավորումը լինի գիտելիքների ստուգման ձևով և հիմնադրով՝ դպրոցներում ունենալ երկարօրյա խմբեր:

Բոլորս գիտենք, որ յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք և պետք է հնարավորություն ունենա ստանալու ու պահպանելու գիտելիքների՝ իր համար ընդունելի մակարդակը: Նրանցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ հետաքրքրություններ և ընդունակություններ: Դրանք հաշվի առնելով՝ ԿԳ նախարարությունը 2010-2011 ուստարում ձեռնամուխ եղավ ներառական կրթության իրականացմանը, որի արդյունքում հատուկ հանձնաժողովների կողմից հետազոտվեցին սահմանափակ կարողություններով երեխաները, կատարվի դասակարգում՝ ըստ զարգացածության աստիճանի:

Շրջանի 18 դպրոցներում 2013-2014 ուստարում ընդգրկված են եղել ներառական կրթության 45 և տնային ուսուցմամբ 34 աշակերտներ: Անցած ուսումնական տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 9 աշակերտներ ավարտել են 9-րդ դասարանը, որոնք, ըստ օրենքի, ազատվել են քննություններից և ստացել կրթության վկայական:

Մեր մասնագետների կողմից բավարար աշխատանքներ են տարվել ներառական կրթությունն արմատավորելու ուղղությամբ: Կազմակերպվել են դաս - միջոցառումներ, երեխաների գործերի ցուցահանդես: Մասնագետները հաճախել են շրջանի բոլոր դպրոցները, որտեղ իրականացվում է ներառական կրթություն, երեխաների հետ անցկացրել գրույցներ, ցուցաբերել մեթոդական օգնություն դասավանդող ուսուցիչներին և ծնողներին: Այս ուղղությամբ նախատեսվում է նոր ուսումնական տարում շարունակել երեխաների հետազոտման աշխատանքները՝ ներգրավելով նաև մանկապարտեզի երեխաներին:

Պարզ է, որ յուրաքանչյուր դպրոցի գործունեությունն գնահատվում է նրա թողարկած «արտադրանքի», այսինքն՝ շրջանավարտին կյանքին նախապատրաստելու՝ նրա կրթվածության ու գրագիտության աստիճանով, մի խոսքով՝ համապատասխանում է արդյոք, շրջանավարտը պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Ես կասեի, որ մեծամասամբ՝ ոչ: Դա նույնպես ունի իր պատճառները. քանի որ մեր պետությունում չեն արգելվում աշակերտների հետ անհատական պարապմունքները, ուստի, շատ ուսուցիչներ դասապրոցեի ժամանակ չեն տալիս այն, ինչ իրենցից պահանջվում է, իսկ բոլոր աշակերտների ծնողները չէ, որ ի վիճակի են վճարել անհատական պարապմունքների համար: Սա նույնպես լուրջ քննարկման թեմա է: Այսինքն՝ կրկնուսի արատավոր երևույթը վերացնելու կամ կարգավորելու համար առաջարկում են հետևյալ տարբերակները. եթե ուսուցիչը պարապում է աշակերտի հետ որոշակի գույնարի դիմաց, ապա այստեղ պետք է տվյալ ուսուցիչը կամ չաշխատի դպրոցում, կամ ծնողի հետ պայմանագիր կապի, որ երեխան պետական







# ՎՈՒՇԱՍՏԱՅԱՆ ԲԱՐԵՎ, ԿՈՄԻՏԱՍ

Քսան տարի առաջ՝ մայիսին, երբ մենք նախապետական քննություններին էինք նախապատրաստվում, մեզանից առաջ անցար՝ թո մատաղ կյանքի գնով հանձնելով ավելի կարևոր մի քննություն, որի համար ոչ թե մեր դասախոսները, այլ Հայրենիքը թեզ «գերազանց» գնահատեց:

Կոմիտաս, անխոցելի էիր դու մեզ թվում: Այնքան անսպասելի, դաժան ու անհեթեթ էր թվում թո մահը, որ մենք՝ համակուրսեցիները, չկարողացանք, չհասցրինք ուշքի գալ ու բաժանվեցինք իրարից ու համալսարանից՝ առանց հրաժեշտի ավանդական խոսքերի, առանց ավարտական երեկոյի: Անհմաստ էր թվում ամեն ինչ: Անասելի ու անտանելի ծանր էր թո և մեր Նունեին սևերի մեջ տեսնելը: Ու բաժանվեցինք... Սակայն մեզանից ամեն մեկը թեզ իր հուշերի հետ տարավ, քանզի ուսանողական ամեն մի լավ հուշ թեզ հետ էր կապված: Դու կուրսի ավագն էիր՝ նախածեռնող, մեծահոգի ու լավատես, ու մենք՝ 24

աղջիկներից 23-ը, թեզ սիրեցինք թող ջերմությամբ, իսկ Նունեն...

Տարիները գլորվեցին, անցան: Քսան տարին կարծես անցավ քսան ակնթարթի պես, ու մենք, արդեն քառասունի սահմանը հատած, այցի ենք եկել գերեզմանիդ:

Բարև, Կոմիտաս: Դու մեզ նայում ես թո 22-ամյա երազկոտ հայացքով, ու մեզ թվում է, թե մեծահոգաբար ժպտում ես մեր ուշացած այցելության համար:

Այդ ինչպե՞ս եղավ, Կոմիտաս, որ մենք միասին կիսեցինք մեր ուսանողական կյանքի ուրախ ու տխուր օրերը, բայց չկարողացանք կիսել մեզ բաժին հասած կյանքը: Գուցե դրանից ավելի՞՝ ծանրացավ մեր սերնդի ուսերին դրված պարտականությունը, գուցե դրանից մեզ բաժին հասած երիտասարդությունը մի քիչ դառնացավ, մենք ժամանակից շուտ լրջացանք ու մեծացանք:

Հիշու՞մ ես, Կոմիտաս, երբ լրացավ 18-ամյակդ, ամբողջ կուրսին հրավիրեցիր Քերթ: Այդ օրը անմո-

ռազ մնաց մեր հիշողության մեջ:

Այսօր կրկին ամբողջ կուրսին «հրավիրեցիր»... ձեր տանն ենք: Ներս ենք մտնում թո մանկության դռնով ու փորձում մեր հուշերի հետքերը գտնել: Ամեն ինչ կարծես նույնն է: Մեզ դիմավորում են արդեն ճերմակած ծնողներդ՝ Արսեն հայրիկը և Սեդա մայրիկը: Նրանք մեզ համար սեղան են բացում: Չկա դու, բայց կա թո մասին հիշողությունը՝ տաք ու լուսավոր: Եվ ծավալվում է զրույցը: Ծնողներդ հուզմունքով պատմում են համալսարանում տեղի ունեցած միջոցառման մասին, ու ես երախտագիտությամբ եմ լցվում մեր ամբիոնի դասախոսների համդեպ և մտովի, 20 տարվա հեռավորությունից, իմ սիրո և ակնածանքի խոսքն եմ հղում նրանց:

Երկուտաձայնությամբ մտնում ենք սենյակդ, ուր թո հուշերն են բուրում: Ժամանակն այստեղ կարծես, կանգ է առել, ամեն ինչ կա՝ ինչպես առաջ: Գրչատուփի մեջ 90-ական թվականների գրիչներն են (այն

գրիչները, որոնց մասին ինքդ գրել ես. «Շփոթվել են իմ գրիչն ու ավտոմատը»), գրքերը, նկարները...

Ցավից, սիրուց ու հպարտությունից ծնված մորդ բանաստեղծությունն ենք լսում՝ թո մասին գրված, ու մեր աչքերը լցվում են արցունքներով. «Ինչու՞, ինչի՞ համար»: Ուզում եմ ցավից գոռալ: Շրջվում եմ՝ արցունքներս թաքցնելու համար, ու հարցիս պատասխանը կարողում եմ ընկերուհուս հայացքում՝ հանուն մեզ՝ ապրողներիս, հանուն Արցախ աշխարհի լուսավոր ապագայի...

Կոմիտաս, թո և բազում նվիրյալ քաջերի թափած արյամբ մայր հողն ավելի բարոյացավ, սրբացավ, որպեսզի մենք՝ ապրողներս՝ ձեզ հիշողներս, մեզ ավելի պարտավորված զգանք, կամրջենք անցյալը ներկային ու ամեն ինչ անենք, որ նոր սերունդը տեր կանգնի մեր չճանաչված, բայց օրեցօր հզորացող ու շենացող երկրին:

Մենք ուշացումով ուխտի ենք եկել գերեզմանիդ, Կոմիտաս, ու

ծաղիկներ ենք բերել թեզ: Եկել ենք սրբելու շիրմաքարիդ փոշին ու ասելու,

«Հպարտ ենք, որ ճանաչել և սովորել ենք միասին, Կոմիտաս: Դու Արցախի ազատությանը նվիր բերեցիր թո ապրած տարիներն ու չզրված բանաստեղծությունները:

Մենք՝ ուսուցչի առաքելությունը ստանձնած թո համակուրսեցիները, պարտավոր ենք մատաղ սերնդին պատմել և գալիք դարերին փոխանցել հերոսության ու սիրամքի այն դյուցազնավեպը, որ հյուսեցիք դուք՝ նվիրյալ նահատակները:

Նճիր խաղաղ, մեր նահատակ ընկեր: Թող թեզ նվիր լինեն արցախյան խաղաղ արշալույսները և ցողաբաբախ ծաղիկները:

**Օֆիկ ՍԱՐԳՍՅԱՆ**  
**Դուզե Ճարտարի Արա Ավանեսյանի անվան հիմնական դպրոցի հունանիպար առարկաների մասնախմբի ղեկավար**

## Շնորհավորանք

### ՄԱՐԴ, ՈՐ ԾԵՎԵԼ Է ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊՐԵԼՈՒ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Սիլվա Ջհանգիրյան: Այս անունը մի քանի տասնյակ տարիներ բարձր է հնչում ոչ միայն շրջանում, այլև ողջ հանրապետությունում: Իր բազմաթիվ սաների համար նա եղել է դեպի լույս տանող այն կողմնացույցը, որը երբեք չի սխալվել ու միմիայն ճիշտ ճանապարհ է լուսավորել:

Ծնվել է Ասկերանի շրջանի Ն.Ազնեք գյուղում: Մանուկ հասակից արդեն աչքի էր ընկնում իր եռանդով և ակտիվությամբ, իսկ դպրոցում ստույգ երևում էին նրա ճշտապահությունը, պարտաճանաչությունը, աշխատասիրությունը, գործին նվիրվելու ունակությունը, որոնք էլ հանդիսացան գիտության բարձունքները նվաճելու կարևոր գործոնները: 1969-ին գերազանցությամբ ավարտելով գյուղի 8-ամյա դպրոցը՝ տեղափոխվում է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 միջնակարգ դպրոց և ավարտում 1971 թվականին: Նույն տարում էլ ընդունվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: Ինստիտուտում ավարտելով գերազանցությամբ՝ նույն տարում աշխատանքի է ընդունվում Դաշեուկաղի 8-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Իսկ 1981-ից աշխատանքի անցնելով Ասկերանի միջնակարգ դպրոցում՝ Սիլվա Ջհանգիրյանը վառում է իր մանկավարժական ուղու այն խորհրդավոր փարոսը, որը լուսավորելու էր նրա փառավոր վերելքի ողջ ընթացքը: Մանկավարժական գործունեության հենց սկզբից նա աչքի է ընկել իր անչափ մեծ եռանդով ու գործին նվիրվելու ունակությամբ: Միայն

նախանձել կարելի է նրա այն ոգևորությանն ու ազատությանը, որոնցով նա դասեր է վարում: Իսկ պատճառը միանշանակ առարկայի հմուտ գիտակ լինելն է, քանզի գիտելիքը և միայն գիտելիքն է մարդուն դարձնում ազատ ու մեծ:

Սիլվա Ջհանգիրյանի՝ որպես հմուտ մանկավարժի աշխատանքի ոճը, դասավանդման ձևը, թողարկած սաների հաջողությունները գրավեցին Լ.Գ.Գ. կրթության և գիտության նախարարության մասնագետների ուշադրությունը, և 2005թ. նրան շնորհվեց «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչումը, որով հպարտացան թե՛ նրա սաները, թե՛ հարազատները և թե՛ գործընկերները: Գիտության հրաշագեղ պսակը գտավ արժանի գլուխ և գարդարեց այն իր ողջ հմայքով:

Սիլվա Ջհանգիրյանը կարողացել է արդարացնել իրեն նաև այն ժամանակ, երբ աշխատել է որպես դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն 2005թ.-ին: Նրա գիտելիքներին վստահում են ոչ միայն նրա աշակերտները, այլև ուսուցիչները: Նա բոլորիս «շտապ օգնությունն» է, «բացատրական բառարանը»: Նրա մեծությունն այն է, որ կարողանում է սովորեցնել: Սիրելով աշակերտներին՝ նա միաժամանակ գիտի պահանջել նրանցից գիտելիք ու լինել վստահ խոսքի մեջ, քանի որ գիտության մեջ անհնարին է կռվել ու ճակատամարտեր շահել մեծ-միայն ջերմ սրտով: Ս. Ջհանգիրյանի սաները մեծ հպարտությամբ են խոսում, որ ունեն կայուն գիտելիքներ հայոց լեզվից: Համալսարանի դասախոսների գովասանքին արժանանալիս Լիլիթ Սարգսյանն այսպես է պատասխանել.

«Բայց ո՞վ է ինձ հայոց լեզու դասավանդել, որ ես դա չիմանամ, և հպարտորեն տվել Սիլվա Ջհանգիրյանի անունը՝ վստահ լինելով, որ ճանաչում են նրան: Նրա սաները միշտ էլ աչքի են ընկել թե՛ շրջանային, թե՛ հանրապետական առարկայական օլիմպիադաներում:

Սիլվա Ջհանգիրյանը, երբ գրականության դասեր է վարում, մնան է հանրահայտ դերասանի, որի հետ ոչ ոք չի կարող մրցել: Նրա խոսքի հնչերանգը, ձեռքերի շարժում-

ները, աչքերի արտահայտությունը, ժեստերը ողջ դասարանը լարված են պահում: Եվ թվում է՝ ոչ միայն ինքն է դառնում դեպքերի մասնակիցը, այլև ողջ դասարանին է ստիպում ապրել իրավիճակը: Նա միշտ ասում է. «Ուսուցիչը պետք է մի քիչ դերասան լինի, որ կարողանա աշակերտի հուզական աշխարհի միջով անցնել և ստիպել նրան սովորել»:

Այդքանով հանդերձ, Սիլվա Ջհանգիրյանը նաև հրաշալի մայր է իր երկու զավակների՝ Սասունի և Սիրայի և խորհրդատու, ծանրակշիռ, հոգատար ու անփոխարինելի կին ամուսնու՝ Մելիոր Ջհանգիրյանի համար: Անմնացորդ նվիրումը ընտանիքին, հարազատներին, բարեկամներին ու ընկերներին մի առանձին ճիտություն ու հմայք են տալիս նրա կերպարին: Մարդ, որ ծնվել է ստեղծելու, արարելու և ապրելու ուրիշների համար:

Սիրելի՛ գործընկեր, շնորհավորում ենք Ձեր 60-ամյա հոբելյանը և ցանկանում եռանդի եռապատկում, քանի որ համոզված ենք, որ դասն ու դասարանն են Ձեզ ոգեշնչում և երիտասարդ պահում: Համոզված եղեք, որ Ձեր սաների, ծնողների և գործընկերների կողմից արժանանում եք մեծ հարգանքի, որովհետև Ձեր միտքն ազատ է ու պատրաստակամ ընդունելու ամեն մի նորը և գիտի գնահատել լավը:

Ձեր սաների հզոր բանակն այսօր միանում է մեզ և ասում, որ ուրախ ու երախտապարտ է, որ Դուք եղել եք իրենց կյանքում: Շնորհակալություն են հայտնում այն բոլոր տարիների, օրերի, 45 րոպեների համար, որոնց ժամանակ գիտելիքի հեղեղ եք թափել նրանց գլխին: Թող Աստված Ձեզ շնորհի այնպիսի առողջություն ու կամք, որ տասնամյակներ շարունակ լուսավորեք հայ մանկանց հոգիներն ու մտքերը և հայոց գիրն ու գրականությունը դարձնեք նրանց պաշտամունքը: Դուք իրոք կատարում եք հայրենանվեր աշխատանք:

*Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

## Շնորհավորանք

### ԲԱՆԻՄԱՅ ՌԻ ՀՄՈՒՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ



Լրացավ սիրված ուսուցչուհի, հոգատար մայր, հարգված մի անձնավորության՝ Գայանե Դավթյանի ծննդյան 50-ամյակը: Նա իր գործին ու մասնագիտությանը նվիրյալ ուսուցչուհի է:

Ծնվել է 1964թ. Ստեփանակերտ քաղաքում: 1971-1981թթ. սովորել է հ.9 միջնակարգ դպրոցում: 1987թ. ավարտելով Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության բաժինը՝ աշխատանքի է անցել քաղաքի հ.8 մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի:

1988-1993թթ. աշխատել է հ.1 միջնակարգ դպրոցում՝ որպես երկարօրյա խմբի դաստիարակչուհի: 1993-1999թթ. աշխատել է հ.8 միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: 2000թ. աշխատանքի է անցել հ.2 միջնակարգ դպրոցում, իսկ 2011թ.-ից առ այսօր աշխատում է ֆիզմաթ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: Որտեղ էլ որ աշխատել է Գ.Դավթյանը, իրեն դրսևորել է որպես հմուտ, բանիմաց, բարեխիղճ մասնագետի:

Կյանքի լավագույն տարիները Գ.Դավթյանը նվիրել է սիրած աշխատանքին՝ կրթել ու դաստիարակել մի սերունդ, որը մեր ապագայի կերտողն է ու արարողը: Պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով է Գայանեն ամեն օր մտնում դասարան, և նրա եռանդը ամենկին էլ չի պակասում: Նա իր սաներին հորդորում է լինել արդարացի, հայրենասեր, ճշտապահ ու ազնիվ:

Սիրելի՛ Գայանե, ֆիզմաթ դպրոցի ողջ մանկավարժական կոլեկտիվը ի սրտե շնորհավորում է թո ծննդյան տարեդարձը, մաղթում առողջություն, երկար տարիների կյանք, բեղմնավոր աշխատանք ու ամենայն բարիք:

*Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՅՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՅՈՒՅԹ

Հայտարարվում են մրցույթներ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի ներքոհիշյալ դպրոցներում ուսուցիչների բափուր տեղերի համար.

- 1. Վաղուհասի մ/դ - դասվար՝ 15ժ
2. Չլդրանի մ/դ - ֆիզիկա՝ 15ժ /կրկնակի/
3. Մաղավուզի մ/դ - ֆիզիկա՝ 15ժ /կրկնակի/, ՆԶՊ -1հաստիք /կրկնակի/, մաթեմատիկա -18ժ /կրկնակի/
4. Կուսապատի մ/դ - մաթեմատիկա՝ 8ժ, ինֆորմատիկա՝ 6ժ
5. Պողոսագոմերի մ/դ - աշխարհագրություն՝ 6ժ /կրկնակի/
6. Նոր Այգեստանի մ/դ - ռուսաց լեզու՝ 6ժ /կրկնակի/, ֆիզկուլտուրա՝ 6ժ /կրկնակի/
7. Ջարդախաչի հ/դ - ռուսաց լեզու՝ 6ժ /կրկնակի/
8. Գառնաքարի հ/դ - ֆիզկուլտուրա 6ժ
9. Վանքի մ/դ - ֆիզկուլտուրա՝ 8ժ /կրկնակի/
10. Թալիշի մ/դ - քիմիա՝ 10ժ/կրկնակի/, աշխարհագրություն՝ 10ժ /կրկնակի/
11. Մոխրաբաղի մ/դ - ֆիզիկա՝ 7ժ /կրկնակի/, դասվար 19ժ /կրկնակի/
12. Չլդրանի մ/դ - հասարակագիտություն՝ 6ժ
13. Չափարի մ/դ - օտար լեզու՝ 15ժ, դասվար՝ 7ժ
14. Ծանակահողի հ/դ - ֆիզկուլտուրա՝ 9 ժ
15. Մեծշենի մ/դ - մաթեմատիկա՝ 11ժ
16. Մարտակերտի հ.2 հ/դ - տեխնոլոգիա՝ 6ժ /կրկնակի/, շախմատ՝ 6ժ/կրկնակի/
17. Նոր Սեյտուլանի մ/դ - քիմիա՝ 10ժ /կրկնակի/, հայոց լեզու՝ 23ժ, ռուսաց լեզու՝ 6ժ, պատմություն՝ 6ժ, ՀԵՊ /հայոց եկեղեցու պատմություն/՝ 7 ժ, դասվար՝ 20ժ /կրկնակի/

- 18. Ջազկի մ/դ - ֆիզիկա՝ 13ժ, աշխարհագրություն՝ 8ժ
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցում:
Մրցույթները տեղի կունենան հոկտեմբերի 6-ից 11-ը ընկած ժամանակահատվածում:
19. Քոլատակի մ/դ - ֆիզիկա՝ 13ժ (կրկնակի), քիմիա՝ 9ժ (կրկնակի), կենսաբանություն՝ 10ժ (կրկնակի), օտար լեզու՝ 18ժ (կրկնակի), ՆԶՊ՝ 1 հաստիք (կրկնակի), մաթեմատիկա՝ 10ժ (կրկնակի), ԹՅՂՈՒԻ մասնաճյուղ - օտար լեզու՝ 4ժ (կրկնակի)
20. Կիչանի մ/դ - կենսաբանություն՝ 12ժ, ՆԶՊ՝ 1 հաստիք
21. Դրմբոնի մ/դ - դասվար՝ 12ժ
22. Հարգոմերի մ/դ - ՆԶՊ՝ 1 հաստիք
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցում:
Մրցույթները տեղի կունենան հոկտեմբերի 13-ից 17-ը ընկած ժամանակահատվածում: Մանրամասը տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. թիվ 25-26-ում, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. թիվ 23-24-ում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՅԹ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության ՄՐՅՈՒՅԹ:

Մրցույթին մասնակցելու հայտի գրավոր դիմումը և փաստաթղթերի փաթեթը՝ ստանձնված ծրարով, Արցախի գիտական կենտրոն է ներկայացնում հետազոտական խմբի ղեկավարն անձամբ (աշխատանքային օրերին՝ ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, Ստեփանակերտ, Տիգրան Մեծ, 10) կամ փոստով (Ստեփանակերտ, Տիգրան Մեծ, 10)՝ մինչև հոկտեմբերի 12-ը:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ինտերնետային կայքում (www.edu.nkr.am):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Արցախի գիտական կենտրոնում աշխատանքային օրերին՝ ժամը 14:00 - 17:00-ը, հեռ.՝ 047-95-80-93:

Դիմանկարի փորձ

ԵՍ ՀԱՅՐԻԿԻՍ «ՇԱԼԱՍՈՅԻ» ՈՒ «ՔՈՉԱՐՈՒ» ՊԱՐՆ ԵՍ ՍԻՐՈՒՄ...

Թող անհամեստություն չլինի իմ կողմից գրել հորս մասին, բայց ես դա անում եմ առավելագույնս ոչ թե որպես դուստր, այլ սովորական մարդ: Կարծում եմ՝ արժե գրել մի մարդու մասին, որը մեծ հարգանք ու պատիվ է վայելում հանրապետության տարածքում և, ինչու չէ, նաև հանրապետությունից դուրս:

Արամ Մելքոնյանը, որը բոլորին հայտնի է Չերքեզ անունով, ծնվել է 1946թ. սեպտեմբերի 24-ին Խնասպատում, աշխատավորի ընտանիքում և դեռ մանկուց իր ուսերին զգացել է դժվար ապրելու ծանր բեռը: Դպրոց գնալուն զուգահեռ նա օգնում էր ծնողներին, բայց երբեք հետ չէր մնում դասերից, դեռ ավելին՝ այդ ամենի հետ մեկտեղ նա զբաղվում էր շվի նվագելով և գաղտնի երազանք ուներ՝ դառնալ մեծ երաժիշտ: Նրա «ուսուցիչը» միշտ գոհ էր լինում իր աշակերտից: Այդպես էլ երաժշտական կրթություն չստանալով՝ նա կարողանում է իրականացնել իր երազանքը և դառնալ լավ երաժիշտ, որի դուրսի, զուռնայի ու շվիի նվագի տակ շատերն են պարել՝ բանվորից մինչև նախագահ:

Մեր բոլորի բնականոն կյանքը խաթարեց պատերազմը: Հայրս, լինելով հմուտ խոհարար ու երաժիշտ, միացավ Խնասպատի՝ հանուն հայրենիքի փրկության կռվողների հոծ բանակին և իրեն անմնացորդ նվիրեց հայրենանվեր գործին:

Կարծում եմ՝ կհամաձայնեք ինձ հետ, որ այնքան էլ հեշտ գործ չէր հաց պատրաստել վաշտի, իսկ երեկոյան զուռնա նվագել մարտից վերադարձած տղաների համար. չէ՞ որ նրանց մարտական ոգին բարձրացնել էր պետք, չէ՞ որ ամեն ռոպե կարող էր տեղի ունենալ վատթարագույնը: Քանի՞-քանի երի-

տասարդներ վերջին անգամ են պարել այդ նվագի տակ: Դա քրքրում էր հորս սիրտը, բայց նա իր մեջ արիություն էր գտնում և շարունակում իր կարևոր առաքելությունը:

Կնքվեց զինտարադար, ավարտվեց պատերազմը, որի արդյունքում հայրս տուն վերադարձավ քայքայված առողջությամբ: Նա երկար ժամանակ չէր կարողանում մոռանալ իր մարտական այն ընկերներին, որոնք այնքան երիտասարդ հեռացան կյանքից: Ես և եղբայրս թեև փոքր էինք, բայց գիտակցում էինք, թե ինչքան ծանր է այդքան ասարկներից հետո բնականոն կյանք վերադառնալը, բայց, ինչպես ասում են, ժամանակը բուժում է վերքերը: Գիշտ է, ֆիզիկապես նա արդեն հիվանդ էր, բայց հոգեպես իրեն դրսևորեց ամենաուժեղ մարդու պես և ոտքի կանգնեց, սկսեց պայքարել նոր գլուխ բարձրացրած հիվանդության՝ շաքարախտի դեմ: Ես, մայրս ու եղբայրս միշտ նրա կողքին էինք և լավ և՛ վատ օրերին, իսկ նա էլ մեզ համար մի ամուր թիկունք էր, որի մասին շատերը կերազեին:

Մի քիչ դժվար է, երբ գրում ես քո հարազատի մասին, բայց, հավատացե՛ք, գալիս է մի պահ, երբ գգում ես, որ դա խիստ անհրաժեշտ է, և որևէ մեկը սխալ չի ընկալի:

Հայրս երկար տարիներ աշխատել է պարի պետական համույթում՝ Աշոտ Բաբայանի գլխավորությամբ: Միշտ շրջապատված երիտասարդներով՝ ինքն էլ հոգով երիտասարդ էր մնում, կատակներով ոգևորում գոր-

ծընկերներին և զարմացնում իր տոկուն բնավորությամբ և կյանքի դժվարություններին ձեռնոց նետելու կարողությամբ:

Ասկերանի շրջանի «Բերդ» համույթը ևս հորս աշխատավայրն էր դեռ շատ տարիներ առաջ և մինչ օրս էլ նույն կերպ շարունակվում է: Զնայած այս վերջին 8 տարիներին նա առողջական լուրջ խնդիրներ ունի (տարել է ծրարները և զարմացնում իր տոկուն բնավորությամբ և կյանքի դժվարություններին ձեռնոց նետելու կարողությամբ): Մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝ 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1) 2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ 3. Անձնագրի պատճենը 4. Ինքնակենսագրություն (Ձև 4) 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում): 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք: 8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:



տրտի երեք վիրահատություն, սպասվում է նաև չորրորդը), շարունակում է աշխատել իր սիրելի համույթում, ուրախացնում բոլորին, ինչի համար անչափ երախտապարտ ենք Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Ս. Գրիգորյանին, որն ըմբռնումով է մոտենում այդ հարցին: Նա գիտակցում է, թե ինչքան կարևոր է աշխատանքը իր կյանքը ժողովրդին ծառայեցրած մարդու համար, մի մարդու, որը պատերազմի տարիներին կարող էր իր մասնակցությունը չբերել՝ տարիքից ելնելով,

բայց նա գերադասեց իր ընտանիքը պաշտպանել: Հիմա էլ դարձյալ նույնն է. նա արդեն երիտասարդ չէ, բայց մնում է երիտասարդների հետ, աշխատում ու հաճույք ստանում իր աշխատանքից: Նա շարունակում է մասնակցել հանրապետության տարածքում կազմակերպվող փառատոների և միշտ գրավել պատվավոր տեղեր, ինչի ապացույցը վերջերս Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կայացած մրցույթն էր՝ «Իմ հոգուն արև է ու գարուն» խորագրով, որտեղ նա գրավեց առաջին տեղը և պարգևատրվեց:

Հանրապետությունում չկա մի քաղաք, գյուղ, որտեղ հնչած չլինի հայրիկիս զուռնայի զիլ ձայնը, բոլորը միայն հիացնումքով ու հարգանքով են խոսում կյանքի դասերից կոփված մարդու մասին, որի միակ հույսն ու ապավենը Աստված է: Հայրս շատ աստվածավախ և աստվածապաշտ մարդ է և մեզ էլ այդպես է դաստիարակել: Նա դժվարին պահերին միշտ հույսը դնում է միմիայն Աստծո բարեգթության վրա, իսկ երջանիկ պահերին՝ շնորհակալ լինում Աստծուն:

Ես հպարտ եմ, որ ունեմ նման հայր, որից շատ բան կարելի է սովորել: Նա օրինակելի է թե՛ որպես մարդ, թե՛ որպես ամուսին, թե՛ որպես ծնող և առավել ևս՝ թե՛ որպես պապիկ:

Իսկ ես Աստծուց խնդրում եմ, որ հայրս առողջ լինի, ապրի երկար և ուրախ, կյանքի դժվարությունները մնան անցյալում: Թող չորս բոլորը լինեն հարսանիքներ, ծնունդներ ու կնունքներ, իսկ հայրիկիս զուռնայի ձայնը թող հնչի դեռ շա՛տ ու շատ տարիներ:

Անահիպ ՄԵԼՈՒՄՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ հիմնադիր՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 18.09.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: